ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԳՀԱՊՁԲ-20-7/54-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 01 .02. 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 10.09.2020թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-7/54-2 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) և ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀԱՊՁԲ-20-7/54-2 գնման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2021թ. մայիսի 1-ը, պայմանով, որ այն կիրառվում է մինչև 2021թ. ՀՀ ՊՆ ծախսային ծրագրով նախատեսված նույն գնման առարկայի գնման մրցակցային ձևով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսվա վերջին օրը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 17,599,560 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կկատարի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ գլխավոր վարչության պետ	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 157 «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510023294810100 ՀՎՀՀ 00803554 տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ս. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	**անվանումը**	**չ/մ**	**քանակը**	**միավորի գինը (ՀՀ դրամ)**	**ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)**	Պայմանագրի իրավունքները և պարտավորությունները ծագում են համապատասխան Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիր կնքելու միջոցով
1	Կիսավերարկու / վերարկու կիսաբրդյա ՊՊԿ/	հատ	220	79,998	17,599,560	
	Ընդամենը	17,599,560 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:				

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ Տնօրեն՝

Ս. ԱՋԱՏՅԱՆ